

## Արա Հովհաննիսյան

### ՍԻՐԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹՈԶԱԽԸԸ ԵՎ ՆՐԱ ԴԵՐԸ ՀԱՅ-ՍԻՐԻԱԿԱՄ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 1991-2011 թթ.

Սիրիակայ գաղութ, ներիամայնքային միություններ, կրթական գործ, եկեղեցիներ,  
հայ-սիրիական հարաբերություն, փոքրամասնություն, իրավունքներ

Հայ-սիրիական հարաբերությունների հետազոտության գործում կարևորագույն դեր ունի սիրիակայ գաղութը, որն իրավացիորեն հաճախ անվանվում է Սփյուռքի մայր համայնք: Պատմության տարբեր ժամանակներում տարածաշրջանում տեղի ունեցող վերադասավորումների, պատերազմների և Հայաստանի պետականության կորստի պայմաններում արտագործի պատճառով Հայաստանը հայաթափվում է: Արտագործող հայերի մի մասը ապաստան է գտնում Սիրիայում, որը աշխարհագրորեն մոտ էր և մշտապես կապված Հայաստանի հետ տնտեսական, քաղաքական և մշակութային առումներով: Իհարկե, կար նաև մի հատված, որը արտագործում էր տնտեսական գործունեություն ծավալելու, ավելի բարեկեցիկ կյանք որոնելու և այլ պատճառներով, սակայն դա շատ ցածր տոկոս էր կազմում:

Սիրիակայ գաղութը, անընդհատ գործելով և հասնելով մինչև XX դար, ստեղծեց մշակութային ուշագրավ արժեքներ: Սիրիակայերը ենթաս XV դարում, մասնաւորապես Հալեպում ունեին իրենց եկեղեցիները, ուխտավորական հյուրատունը, առաջնորդարանի շենքը և այլն<sup>1</sup>: XIX դարում օսմանյան տիրապետության տակ գտնվող Սիրիան բաժանվեց վարչատարածքային տարբեր միավորումների, որոնցից գրեթե բոլորում էլ կային հայկական համայնքներ: Այդ միավորումներում 1870-1880-ական թթ. հաշվում էին 80-85 հազար հայեր<sup>2</sup>:

Սիրիայի հայ համայնքը մեծապես համալրվեց 1915 թ. Հայոց ցեղասպանությունից հետո: Կոտորածից փրկված հայ գաղթականները սկզբնական շրջանում Սիրիայում ապրում էին շատ ծանր պայմաններում, սակայն ժամանակի ընթացքում ինքնակազմակերպվելով, ինտեգրվեցին Սիրիայի հասարակական կյանքին, իսկ ցեղասպանության ընթացքում և դրանից հետո հայերի նկատմամբ արաբների դրական վերաբերունքը նպաստեց երկու ժողովուրդների հարաբերությունների սերտացմանը: Հայերը աստիճանաբար վերաճեցին կազմակերպված ու կենսունակ համայնքի, որը ձգտում էր պահպանել իր ազգային ինքնությունը:

1924 թ. հունիսի 12-ին Ազգերի լիգայի տրամադրած ինքնության վկայագրերը և ապա նոյն թվականի ամռանը Սիրիայի քաղաքացիության ընդունումը հայերի սոցիալ-քաղաքական կյանքում նշանակալի երևույթ էր<sup>3</sup>: Այս ամենը դրական

<sup>1</sup> Տես Հայ գաղթաշխարհի պատմություն, հ. 2, Ասիայի և Աֆրիկայի հայկական գաղութները, խմբ. Վ. Միքայելյանի, Եր., 2003, էջ 320:

<sup>2</sup> Նույնը:

<sup>3</sup> Տես Փաշայան Ա., Հարությունյան Լ., Սիրիայի հայ համայնքը. արդի հիմնախնդիրներ, Եր. 2011, էջ 11:

ազդեցություն ունեցավ սիրիահայերի կյանքում, քանի որ նրանք հնարավորություն ստացան մասնակցել Սիրիայի հասարակական-քաղաքական իրադարձություններին որպես այդ երկրի լիարժեք քաղաքացիներ: Համայնքը դարձավ առավել պաշտպանված և օրինական:

Հայ համայնքի համար ազգային գործունեություն ծավալելու առավել նպաստավոր պայմաններ ստեղծվեցին Հաֆեզ Ալ-Ասադի իշխանության տարիներին: Նրա օրոք /1970-2000 թթ./ ազգային փոքրամասնությունների նկատմամբ վարվող քաղաքականությունը դրվեց այլ հարթության վրա, որի նպատակն էր ապահովել իշխանության նկատմամբ համայնքների ղեկավար շրջանակների աջակցությունը<sup>1</sup>: Յ. Ալ-Ասադը արաբական պետությունների ղեկավարներից առաջին նախագահն էր, որն ընդգծեց իր երկրի՝ հայերի երկրորդ հայրենիք լինելու հանգամանքը<sup>2</sup>: Ըստ հանրապես, Յ. Ալ-Ասադին բնորոշ էր զգայուն վերաբերմունքը ազգային և կրոնական փոքրամասնությունների նկատմամբ, որի դիմաց նա վայելում էր նրանց անկեղծ հարգանքն ու քաղաքական աջակցությունը: Ըստ մեզ՝ այս վերաբերմունքի պատճառներից էր նաև այն, որ Սիրիայի նախագահը ևս սերում էր կրոնական փոքրամասնություն հանդիսացող ալավիական համայնքից և լավ հասկանում ու պատկերացնում էր նրանց խնդիրները:

Կրոնական փոքրամասնությունների հանդեպ վարվող քաղաքականությունը Սիրիայում 1991-2011 թթ. փոփոխություններ չկրեց: Պետությունը վարում էր բավականին հետևողական քաղաքականություն այդ ուղղությամբ՝ երաշխավորելով հավատքի ազատություն: Իշխանությունները շարունակում էին նաև հովանավորել կրոնական համայնքների ինքնուրույն կարգավիճակը: Սիրիայի հայ գաղութը պետության կողմից գրանցված էր որպես կրոնական փոքրամասնություն: Ամեն եկեղեցի կամ առաջնորդարան ուներ իր դատարանը: Եկեղեցին համարվում էր տվյալ կրոնական փոքրամասնության ղեկավար մարմինը և կարգավորում էր իր համայնքի իրավական գործառույթները: Այն հանդիսանում էր համայնքի ներկայացուցիչ պետության առաջ և պետության ներկայացուցիչ համայնքի առաջ: Հայոց Եկեղեցուն գոյություն ունեցող դատաիրավական համակարգը ընդունված և հաստատված էր Սիրիայի Արդարադատության նախարարության կողմից:

Պետք է նշել, որ Հայոց Եկեղեցին Սիրիայում, ինչպես նաև Սփյուռքի մյուս գաղութներում, իր շուրջը հավաքելով տարագիր հայերին և օգնելով կազմակերպել նրանց կյանքը օտարության մեջ, ուղղակիորեն կատարել է պետության դեր: Եկեղեցին իրականացրել է ոչ միայն կրոնական՝ հոգևոր գործունեություն, այլև այնպիսի գործառույթներ, որոնք ընդգրկել են համայնքների բոլոր ոլորտները՝ կրթական, մշակութային, սոցիալական, տնտեսական, հրատարակչական, դատական և այլն: Եկեղեցիները համայնքային գործերի կարևոր դերակատարներ էին: Նրանք իրականացնում էին իրենց գործունեությունը՝ կապված ազգային ինքնության և ավանդույթների

<sup>1</sup> Migliorino N.,(Re)constructing Armenia in Lebanon and Syria: Ethno-Cultural Diversity and the State in the Aftermath of a Refugee Crisis, New York, Oxford, 2008, p. 156.

<sup>2</sup> Տես Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, հ. 4, Եր. 2007, էջ 547:

պահպանման հետ: Նաև սոցիալական, հասարակական կյանքի կազմակերպման կարևոր կենտրոնները էին: Կառավարում էին դպրոցները, բարեգործական ընկերությունները, աջակցում էին հայկական մշակութային միջոցառումներին և այլն:

2003 թ. տվյալներով Սիրիայում գործում էին մոտ հինգ տասնյակի հասնող հայկական եկեղեցիներ<sup>1</sup>: Սիրիահայերի հիմնական մասը Յայ առաքելական եկեղեցու հետևորդներ էին, բայց կանյին նաև հայ կաթոլիկներ ու հայ ավետարանականներ: Յայ կաթոլիկներն ունեն առաջնորդարաններ՝ Յալեպում և Դամասկոսում, իսկ ավետարանականները՝ համայնքաթություն Յալեպում: Յայաստանյաց առաքելական եկեղեցին Սիրիայում ունի երկու թեմ<sup>2</sup>: Բերիո /առաջնորդանիստը՝ Յալեպի Սիրոց Քառասնից Մանկանց եկեղեցի/, որը Ենթակա է Անթիլիասին, և Դամասկոսի /առաջնորդանիստը՝ Դամասկոսի Ս. Սարգիս եկեղեցի/, որ Ենթակա է Սուրբ Էջմիածնին: Եկեղեցու այս երկփեղկվածությունը բավականին լուրջ խնդիր է համայնքում, որը իր ազդեցությունն է թողում նաև համայնքի միասնականության վրա՝ հանդիսանալով տարանջատման հիմնական գործոն: Այն խիստ ընդգծված է Սիրիայում: Այնուամենայնիվ, սիրիահայ գաղութի կրոնական բոլոր շերտերը ունեն իրենց տեղն ու դերը, իրենց առաջ ծառացած խնդիրները: Նրանց միջև տեղի է ունենում առողջ համագործակցություն: Սիրիայում գործող Բերիո թեմի առաջնորդարանը բացի հոգևոր-կրոնական գործունեությունից իրականացնում է նաև մշակութային և հայագիտական աշխատանք: Նրա առաջնորդի հովանավորությամբ հրատարակվում են գրական-գեղարվեստական «Երթ» և «Տարեկ» հայագիտական տարեգրքերը, թեմի պաշտոնաթերթ համարվող «Գանձասարը»<sup>3</sup>, հայոց լեզվի դասագրքեր և այլն: Բերիո թեմի առաջնորդարանի հովանավորությամբ է գործում նաև Սիրիահայ գրողների միությունը:

Սիրիայում հայ քաղաքական կուսակցություններին արգելված է զբաղվել քաղաքականությամբ<sup>4</sup>, սակայն, չնայած այդ հանգամանքին, հայերը, սկսած 1973 թ. Ազգային ժողովի առաջին ընտրություններից, համարյա մշտապես տեղ ունեն Սիրիայի խորհրդարանում: Յայ համայնքին հատկացվում էր մեկ տեղ<sup>5</sup>: Յայ պատգամավորի ներկայությունը Սիրիայի ժողովրդական ժողովում անշուշտ շատ կարևոր էր գաղութի համար: Ունենալով իր ներկայացուցիչը խորհրդարանում՝ համայնքը հնարավորություն էր ստանում պաշտոնապես բարձրացնել իրեն հուզող հարցերը երկրի օրենսդիր մարմնում և մասնակից դառնալ պետության զարգացմանն ուղղված օրենքների ընդունմանը: Յայերը ներկայացված էին նաև Սիրիայի հայաշատ շրջանների տեղական որոշ վարչական մարմիններում<sup>6</sup>:

<sup>1</sup> Migliorino N., Աշվ. աշխ., էջ 195-197:

<sup>2</sup> Տե՛ս Փաշայան Ա., Յարությունյան Լ., Աշվ. աշխ., էջ 12:

<sup>3</sup> <http://www.kantsasar.com/> 12.12.2012.

<sup>4</sup> «Կապիտալ» օրաթերթ, 17.06.2009:

<sup>5</sup> Տե՛ս Յովհաննիսյան Ն., Յայաստանը անդրկովկասյան-մերձավորարևելյան աշխարհաքաղաքական տարածաշրջանի գործոն, Մերձավոր և Սիրիա Արևելքի երկրներ ու ժողովուրդներ, հ 18, Եր., 1999, էջ 35:

<sup>6</sup> Տե՛ս Փաշայան Ա., Յարությունյան Լ., Աշվ. աշխ., էջ 28:

Հայ քաղաքական կուսակցությունները Սիրիայում գործում էին հասարակական, մշակութային, մարզական և բարեգործական կազմակերպությունների կամ միությունների շրջանակներում, որոնք կարևոր դեր ունեին համայնքի կյանքում: Ներգրավվելով Սիրիայի սոցիալական և մշակութային գործընթացներում՝ նրանք կենտրոնացած էին հայապահպանության խնդիրների վրա: Նշված կազմակերպությունների մասնաճյուղերը գործում էին Սիրիայի համարյա բոլոր հայաշատ վայրերում: Ունենալով անմիջական կապեր Սիրիայից դուրս գտնվող համայնքային կառույցների և մայր հայրենիքի հետ՝ նրանք նպաստում էին հայկականության ամրապնդմանը և ազգային միասնությանը: Այդ կառույցները հաճախակի կազմակերպում էին մարզական և մշակութային միջոցառումներ, որոնց մասնակցում էին Հայաստանից, Սփյուռքի տարբեր շրջաններից ու արտերկրից ժամանած հյուրեր: Սիրիայում գործող միությունները պաշտոնապես արտոնված էին և ունեին իրենց ներքին կանոնադրությունը:

Ընդհանուր առմամբ Սիրիայի հայ գաղթօջախի պատմության ընթացքում հիմնվել են հարյուրավոր կազմակերպություններ ու միություններ, սակայն ոչ բոլորին է հաջողվել պահպանել իրենց գոյությունը միչև մեր օրերը: Առավել հայտնի են Համազգայինի հայ կրթական և մշակութային միությունը, Նոր սերունդ մշակութային միությունը, Հայկական բարեգործական ընդհանուր միությունը /ՀԲԸ/, Թեքեյան մշակութային միության մասնաճյուղերը, Հայ կաթողիկե միությունը և այլն<sup>1</sup>:

Բավական ակտիվ գործունեություն էին իրականացնում Համազգային, Թեքեյան, Նոր սերունդ մշակութային միությունները և ՀԲԸ-ը (Վերջինս աշխարհում գործող ամենախոշոր հայկական հասարակական կազմակերպությունն է): Առաջին երեքը վայելում էին համապատասխանաբար ՀՅԴ, ՈԱԿ և ՍՄՀԿ կուսակցությունների հովանավորությունը: Այս միությունները ունեին իրենց մասնաճյուղերը Սիրիայի տարբեր քաղաքներում: Նրանց հիմնական նպատակը հայկական ավանդույթների պահպանումն ու տարածումն էր<sup>2</sup>: Այս մշակութային միությունների հովանու ներքո էին գործում բազմաթիվ երգչախմբեր, պարախմբեր, թատերախմբեր, նկարչական արվեստանոցներ և այլ:

Հայ ազգային ինքնության պահպանման, սերունդներին հայեցի դաստիարակելու և պատմական արմատներին հաղորդակից դարձնելու ձգտումը մշտապես եղել է հայապահպանման գլխավոր բաղկացուցիչը: Հայ գիտակցության մեջ պետականության բացակայության և ազգային ինքնության կորստի մշտական սպառնալիքը առանձնահատուկ վերաբերունք է ձևավորվել ազգային դպրոցի հանդեպ: 1990-ականներից հետո հայկական կրթական հաստատությունների և սիրիական պետության փոխհարաբերությունների մեջ փոփոխություն չնկատվեց: Դրանք շարունակում էին մնալ այն սահմաններում, որոնք հաստատվել էին 1970-ական

<sup>1</sup>Տես Ամստինյան Ս., Աշվ. աշխ., էջ 46-47:

<sup>2</sup>www.hamazkasyr.com 25.11.2012., Սարգսյան Ա., Թեքեյան մշակութային միություն, Հայ Սփյուռք համբագիտարան, էջ 663,

[http://www.armeniandidiaspora.am/am/Encyclopedia\\_hasarakakan\\_qaxaqakan\\_kyanqy/](http://www.armeniandidiaspora.am/am/Encyclopedia_hasarakakan_qaxaqakan_kyanqy/) 07.12.12.

թվականների<sup>1</sup>: Դպրոցների կարգավիճակը մնաց մասնավոր և հայկական, հիմնականում Եկեղեցիների հովանու ներքո: Կրթական ծրագիրը շարունակում էր սահմանել կրթության նախարարությունը: Հայկական դպրոցների և պետության հարաբերությունները հիմնականում կրում էին գործնական և խաղաղ բնույթ: Սիրիական իշխանությունները հայկական դպրոցների նկատմամբ ցուցաբերում էին ընդգծված բարյացական վերաբերմունք: Սիրիայում գործող հայկական դպրոցները հասնում են մի քանի տասնյակի<sup>2</sup>: Անենօյա դպրոցների գերակշիռ մասը կազմող վարժարանները վայելում են Եկեղեցու և քաղաքական կուսակցությունների հովանավորությունն ու աջակցությունը: Կային կրթօջախներ, որոնք ստեղծվել և գործում էին ՀԲԸՍ հովանու ներքո: Չնայած գոյություն ունեցող ներիամայնքային խնդիրներին և միջկուսակցական հակասությունների<sup>3</sup>՝ կրթական քաղաքականության մեջ տարածայնություններ գոյություն չունեին, քանի որ բոլորի նպատակը հայեցի դաստիարակությունն էր: Բոլոր դպրոցներում ուսուցանումը կատարվում էր նույն ծրագրով:

1991-2011 թթ. Սիրիայում հայ երիտասարդները ավելի շատ էին բարձրագույն կրթություն ստանում, քան 1970-1980-ականների<sup>4</sup>: Դա պայմանավորված էր հայ բնակչության կենսամակարդակի բարձրացնամբ, նաև նրանով, որ հայերը ծերբագատվել էին նախսկին գաղթականի կերպարից, որը լուծում էր միայն նյութական խնդիրներ: Նախսկինում հայ գաղութն ավելի հակված էր դեպի արհեստները: Սակայն չենք բացառում, որ այսօրվա պայմաններում երիտասարդների մի մասը նորից թերվի դեպի արհեստներ:

Չամայնքի կյանքում կարևոր դեր ունեին հայկական մշակութային միությունները: Նրանց մասնաճյուղերը բաղկացած էին զանազան ակումբներից, որոնք սիրիահայերին մշակութային գործունեությամբ զբաղվելու բազմաթիվ հնարավորություններ էին ընծեռում: Նրանք կազմակերպում էին զանազան միջոցառումներ, որոնց ընթացքում ներկայացվում էր հայկական և արաբական մշակույթը: Սիրիայում կային նաև հայկական թատրոն, երաժշտանոց, նկարչության կենտրոն, ազգային խմբեր և այլն: Սիրիայում հայկական թերթեր չեն հրատարակվում, սակայն սիրիահայերը օգտվում էին Լիբանանում հրատարակվող թերթերից<sup>5</sup>: Սիրիայում տպագրվում և հայկական շրջանակներում տարածվում էր միայն Յալեպի /Բերին/ Յայոց թեմի «Գանձասար» շաբաթաթերթը: Սիրիահայերը դիտում էին Լիբանանի հեռուստաալիքներից մեկի հեռարձակած հայկական լուրերի ժամը, իսկ արբանյակային հեռարձակումներից օգտվելու հնարավորություն ունեցողները դիտում են հայաստանյան մի շարք ալիքներ:

Մեր կարծիքով հայկական ալիքների հեռարձակումը Սիրիայում դրական մեջ նշանակություն ուներ, քանի որ կարող էր նպաստել ազգապահպանության և միասնականության գործին: Սիրիայում գոյություն ունեցող բավականին ընդգծված

<sup>1</sup> Migliorino N., նշվ. աշխ., էջ 206:

<sup>2</sup><http://armenpress.am/arm/news/694258/zhirayr-reyisyan-no-shots-in-the-morning-in-aleppo.html>  
25.09.2012.

<sup>3</sup> [http://noravank.am/arm/issues/detail.php?ELEMENT\\_ID=2338](http://noravank.am/arm/issues/detail.php?ELEMENT_ID=2338) 09.03.2009.

<sup>4</sup> Migliorino N., նշվ. աշխ., էջ 212:

Աերկուսակցական և կրոնական ուղղությունների ֆոնին այն կարող էր միավորիչ և համախմբող գործոն դառնալ: Ինչպես գիտենք, այսօր աշխարհում ամենահզոր գենքերից մեկը լրատվությունն է և ծիշտ քարոզություն իրականացնելու դեպքում սիրիակա գաղութի մերիամայնքային կյանքում կարելի էր լուրջ տեղաշարժեր ակնկալել գոյություն ունեցող տարածայնությունները հարթելու և նշված ուղղություններին մի գաղափարի շուրջ համախմբելու առումով: Կարելի էր, օրինակ, սփյուռքահայերի համար հատուկ հաղորդումների շարք պատրաստել արևատահայերենով:

Սիրիակա գաղութում 1991-2011 թթ. առկա էին մի շարք խնդիրներ, որոնց մի մասը գալիս էր անցյալից, իսկ մյուս մասը կապված էր ժամանակակից աշխարհում տեղի ունեցող համընդհանուր գործընթացների, փոփոխությունների և տեղաշարժերի հետ: Ներիամայնքային գլխավոր խնդիրներից մեկը շարունակում էր մնալ եկեղեցու երկփեղկվածությունը<sup>1</sup>: Թեմական հարցը պառակտել էր դամասկոսահայ համայնքը՝ բաժանելով այն գործնականում երկու թիվ: Առաջինի մեջ մտնում են էջմիածնական կողմնորոշում ունեցողները՝ ինչակյան, ռամկավար, բարեգործական և կոմունիստ շրջանակները, իսկ մյուս թևում՝ դաշնակցականներն էին, որոնք անթիլիասական կողմնորոշում ունեն: Վերջիններս բոյկոտում էին Դամասկոսի հայոց թեմի առաջնորդի կազմակերպած միջոցառումները: Այս հարցը իրականում վերածվել էր անլուծելի խնդրի և շատ ժամանակ թուլացնում էր համայնքի դիրքերը: Դամահայկական նշանակություն ունեցող միջոցառումներն անգամ այս երկու թևերը Դամասկոսում նշում էին առանձին:

Մյուս կարևոր խնդիրը սիրիակա գաղութի կյանքում համայնքի ծերացումն էր: Դրա պատճառներից մեկը արաբական մշակույթի ներթափանցումն էր հայկական համայնք և նրա ազդեցությունը հայ երիտասարդների վրա: Արաբերեն լեզվի լայն օգտագործողմանը, ինչպես նաև ազգային ինքնության պահպանան հարցում անտարբերության մեծացումը բացասաբար էին անդրադարձում համայնքի ազգային դիմագծի վրա: Այս ամենի պատճառով պակասում էին ամուսնությունները, նվազում էր ժողովրդագրական աճը, և շատանում էին խառնամուսնությունները, որ ավելի էին դժվարացնում ազգային ինքնության պահպանան գործընթացները: Բացի այդ կա մի հատված, որն իրեն հեռու էր պահում ազգային կյանքից: Նրանց մի մասը հայախոս չէր, և նրանց ցանկությունը՝ հայկական միջավայրում մնալու, հետզհետե պակասում էր: Կամիշլի համայնքը, օրինակ, հիմնականում քրդախոս և արաբախոս էր<sup>2</sup>:

Սակայն ամենալուրջ խնդիրը գաղութի կյանքում Սիրիայի տնտեսական իրադրության վատթարացման և տարածաշրջանի լարված իրավիճակի պատճառով առաջացած արտագաղթի աշխուժացումն է<sup>3</sup>: Դայերն արտագաղթում էին Լիբանան, ԱՍՍ, Կանադա, Արաբական Միացյալ Էմիրություններ, ԵՄ և այլն: Արտագաղթողների մեծ մասը երիտասարդներ էին, որոնք ուսանելու էին գնում և չէին վերադառնում: Երիտասարդ-

<sup>1</sup>Տես «Ազատ օր» օրաբերեք, 05.04.2002:

<sup>2</sup>[http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT\\_ID=2346](http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=2346) / 25.09.2008.

<sup>3</sup>Դարիքանյան Գ., Դաֆեզ ԱԼ Ասադը և Ուղղիչ Շարժումը Սիրիայում, Եր. 2012, էջ 199:

Աերի արտագաղթը համայնքի ծերացնան լրջագույն պատճառներից էր և ազգային ինքնության պահպաննան ամենամեծ խոչընդոտը:

Չնայած համայնքում առկա վերոնշյալ խնդիրներին և դժվարություններին՝ պետք է արձանագրենք, որ սիրիահայ գաղութը բավականին միասնական մի կառուց է, որի տարբեր շրջանակների /դավանաբանական, սոցիալական և այլն/ միջև մշտապես գոյություն ունի երկխոսություն ու համագործակցություն: Այս ամենը պայմանավորված է ազգային բարձր գիտակցությամբ, որի հիմքում ընկած է ազգապահպանության ու հայրենիքի գաղափարը և կապը Հայաստանի հետ:

Սիրիահայ համայնքի օրակարգը անբաժան ձևով կապված է Սփյուռքի հետ, որտեղ կարևոր նշանակություն ունեն Հայ դատի և Հայոց ցեղասպանության հարցերը: Համայնքն ապրում է ազգային, հոգևոր-մշակութային և հասարակական աշխույժ կյանքով: Հայերի մեծամասնությունը հայախոս են: Հայեցի դաստիարակությունը, որ սկսվում է ընտանիքներից, շարունակվում է դպրոցներում և մշակութային ու մարզական միություններում: Միությունների մշակած ազգային ծրագրերը սիրիահայերին հասանելի էին իրենց ենթակառուցվածքների միջոցով: Ունենալով զգալի ֆինանսական և մարդկային ռեսուրսներ, ինչպես նաև բազմաֆունկցիոնալ կառույցներ՝ այն իրավացիորեն համարվում է ամենակայացած հայ համայնքներից մեկը:

Համարձակորեն կարելի է նշել, որ Յ. ալ-Ասադի նախագահության շրջանում սիրիական իշխանությունների և հայերի միջև եղած հարաբերությունները ավելի սերտացան, որի շնորհիվ հայերի դիրքերը սիրիական հասարակության բոլոր շերտերում ամրապնդվեցին: Դրան նպաստում էր այն, որ հայերը Սիրիայում չունեին քաղաքական հավակնություններ և վարչակարգի համար խնդիրներ չէին ստեղծում:

Սիրիական պետության և հայ համայնքի միջև ձևավորված ջերմ հարաբերությունները նպաստեցին Սիրիայի և Խորհրդային Հայաստանի միջև բարեկամական հարաբերությունների կայացմանը, որի գագաթնակետը եղավ Սիրիայի նախագահի այցը Խորհրդային Հայաստանի մայրաքաղաք Երևան<sup>1</sup>: Բարեկամական հարաբերությունները շարունակվեցին նաև նորանկախ Հայաստանի Հանրապետության օրոք: Ինչպես և նախկինում, այս հարաբերությունների ձևավորման, ամրապնդման և սերտացման մեջ ներ էր սիրիահայ համայնքի դերը, որի թվաքանակը մինչև 2011 թ. սիրիական ճգնաժամը տարբեր հաշվարկներով կազմում էր 50-100 հազար<sup>2</sup>:

Հայաստանի անկախացումից հետո՝ 1991 թ., Հայաստանի Հանրապետության և Սիրիայի Արաբական Հանրապետության միջև ձևավորվեցին ջերմ բարեկամական հարաբերություններ: Անկախացման առաջին տարիները, ինչպես գիտենք, շատ ծանր էին Հայաստանի Հանրապետության համար: Մի կողմից՝ Արցախյան պատերազմն էր, մյուս կողմից՝ 1988 թ. տեղի ունեցած երկրաշարժի հետևանքով առաջացած աղետի գոտին՝ իր բազմաթիվ խնդիրներով ու անօքանա մարդկանցով:

<sup>1</sup> Տե՛ս «Ազգ» օրաթերթ, 14.06.2000:

<sup>2</sup> Տե՛ս Ղարիբջանյան Գ., Հաֆեզ ալ Ասադը և ուղղիչ շարժումը Սիրիայում, Եր. 2012, էջ 199, Փաշայան Ա., Հարությունյան Լ., Սիրիայի հայ համայնքը. արդի հիմնախնդիրներ, Եր. 2011, էջ 13, «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 20.10. 1994, «Կապիտալ» օրաթերթ 17.06. 2009, «19.06.2009, [http://noravank.am/arm/issues/detail.php?ELEMENT\\_ID=2338](http://noravank.am/arm/issues/detail.php?ELEMENT_ID=2338).

Դրան էլ եթե գումարենք Թուրքիայի և Ադրբեյջանի կողմից իրականացվող շրջափակումը ու անցումային փուլում գտնվող Երկրներին բնորոշ խնդիրները, ապա պատկերը պարզ է դառնում: Նման պայմաններում, բնականաբար, նորանկախ Հայաստանի համար դժվար էր արտերկրում դեսպանատներ և հյուպատոսարաններ բացել: Բայց հաշվի առնելով այն կարևորությունը, որ ուներ Սիրիան՝ մեր Երկրի համար տարածաշրջանային ինտեգրման և այնտեղ ապրող բազմահազար հայերի հետ կապված, ՀՀ-ը ՍՍՀ-ն հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելուց հետո բացեց իր ներկայացուցչությունները այդ Երկրում /դեսպանատուն՝ Դամասկոսում (1992 թ.) և հյուպատոսարան՝ Հալեպում /1993 թ./: Այս գործընթացներին մեծապես օգնեց սիրիակայ համայնքը: Դամասկոսում գործող ՀՀ դեսպանատան տարածքը վարձակալվել էր համայնքի միջոցներով, իսկ ավելի ուշ նույն համայնքի միջոցներով ՀՀ-ին հյուպատոսարանի շենք նվիրաբերվեց Հալեպում<sup>1</sup>: Բացի այդ՝ մեր դիվանագիտական ներկայացուցչությունների գործունեության ընթացքում ծագած ցանկացած խնդիր շատ արագ լուծվում էր համայնքի շնորհիվ, որը մեր հայրենակիցների ազնիվ, հավատարիմ և վստահելի քաղաքացի լինելու համբավի շնորհիվ էր: Այս ամենը, ինչ խոսք, նպաստում էր Երկու Երկրների հարաբերությունների սերտացմանը: Լավագույն ճանաչելով իրադարձությունը փոխադարձաբար խոր հարգանք էին տածում միմյանց մշակույթի և հավատալիքների հանդեպ: Դեսպանատան և հյուպատոսարանի հիմնադրման առաջին իսկ օրերից մեր հայրենակիցների կողմից զգացվում էր հոգատար Վերաբերմունք և ցանկացած հարցում օգնելու մեջ պատրաստակամություն: Դեսպանատունը հասարակական կարգով ուներ Պատվո խորհրդականների միություն: Ատենապետների հետ մշտապես անցկացվում էին խորհրդակցություններ, քննարկվում էին հարցեր և ընդունվում որոշումներ<sup>2</sup>:

Քաղաքական հանգամանքներից Ելնելով՝ 1990-ականներին մի որոշակի ժամանակահատվածում կտրվեցին հարաբերությունները գործող կուսակցություններից մեկի հետ: Խոսքը դաշնակցության մասին է<sup>3</sup>, որը Սիրիայում լոկ կուսակցություն չէ: Այն Եկեղեցու առաջնորդաբան է, հայրենակցական միություններ, մշակութային և մարզական կազմակերպություններ և այլն: Դա, ինչ խոսք, բացասաբար էր անդրադանուն Սփյուռքի մի հատվածի և դեսպանատան, ինչպես նաև մայր հայրենիքի հետ շփումների վրա և բարդացնում էր որոշակի հարցերի լուծումը: Այն բացասաբար էր անդրադանուն նաև ազգային միասնության վրա: Սակայն, բարեբախտաբար, այդ վիճակը Երկար չտևեց, և խնդիրները հարթվելուց հետո Վերսկսվեց նորմալ համագործակցությունը: Դեսպանատան փոքրաթիվ անձնակազմի հաջող գործունեության հիմքում ընկած էր սիրիակայերի սրտացավությունը և բարի կամեցողությունը: Դեսպանատան շենքի վարձակալումից բացի համայնքը հոգում էր նաև կահավորման հետ կապված խնդիրները: Ինչպես տեսնում ենք, համայնքը ցույց էր տալիս ոչ միայն բարոյական, այլ նաև նյութական օժանդակություն: Մեր հայրենա-

<sup>1</sup> ՀՀ ԱԳՆ, ՊԴԱ, գ.143, էջ 92:

<sup>2</sup> Տես «Ազատ օր» օրաբերք, 05.04.2002:

<sup>3</sup> Խոսք:

Կիցները Սիրիայում հիմնականում ապրում էին բարեկեցիկ կյանքով և իրենց հիմնած կառույցների ու հանայնքի կայացվածության շնորհիվ կարողանում էին փոխօգնության ծեռք մեկնել ոչ միայն իրար, այլ նաև մայր հայրենիքին:

Դամեմատության համար նշենք, որ առավել բարեկեցիկ և զարգացման պատշաճ մակարդակ ունեցող երկրները իրենք են օգնում օտար երկրներում ազգային փոքրամասնություն հանդիսացող իրենց համայնքներին, և այս պարագայում ցանկալի կլիներ, որ ՀՀ-ը հասներ մի այնպիսի մակարդակի, որ ինքը կարողանար օգնել արտերկրում ապրող իր հայրենակիցներին՝ նպաստելով ազգապահապանմանը, իսկ հարկ եղած դեպքում էլ ապաստան տար նրանց մայր հայրենիքում:

Սիրիացիները, հայերի կողքին ապրելով և նրանց լավ ճանաչելով, յուրահատուկ կերպով ճանաչում էին նաև Յայաստանը, իսկ Յայաստանն էլ իր հայրենակիցների միջոցով՝ սիրիացիներին, որը դրականորեն էր ազդում երկու երկրների հարաբերությունների գարգացման վրա: Յայերը Սիրիայում ներգրավվելով տարբեր ոլորտներում ամեն կերպ նպաստում էին տեղերում հայ-սիրիական հարաբերությունների գարգացմանն ու ամրապնդմանը: Օրինակ, հայազգի Սմբուլ Սմբուլյանը 2003 թվականից ՍԱՀ ժժ պատգամավոր էր, միաժամանակ Սիրիայի խորհրդարանի հայ-սիրիական բարեկամության խմբի նախագահ<sup>1</sup> և արտաքին հարաբերությունների հանձնաժողովի անդամ: Բնականաբար նա իր գործունեությամբ առավել շահագրգուված էր նպաստել հայ-սիրիական հարաբերությունների ամրապնդմանն ուղղված քայլերին, իսկ նրա ազգային պատկանելիությունը այս դեպքում դրականանորեն էր ազդում ինչպես հայ-սիրիական միջխորհրդարանական, այնպես էլ ընդհանրապես քաղաքական հարաբերությունների վրա: Յայ-սիրիական գործարար խորհրդի սիրիական կողմի հանանախագահն էր Յալեպի առևտրական պալատի խորհրդի անդամ Լևոն Զաքի Ետալյանը<sup>2</sup>, որը հայազգի մյուս գործարարների հետ հետևողական քայլեր էր ծեռնարկում այդ ոլորտում երկու երկրների հարաբերությունները գարգացնելու ուղղությամբ: Սիրիահայերը ակտիվորեն ներգրավված էին երկրի մշակույթային ոլորտում: Նրանք նկատելի դեր ունեին հատկապես երաժշտության բնագավառում: Սիրիայի սիմֆոնիկ նվագախմբի դիրիժորն էր Միսաք Բաղրուդարյանը, որը հայտնի անուն էր Սիրիայում: Մինչ այդ Սիրիայի սիմֆոնիկ նվագախմբի խնբավարը երբեք հայ չէր եղել: Դրանով էր պայմանավորված նաև երկու երկրների միջև աճող համագործակցությունը այս ուղղությամբ: Մշակույթի բնագավառում վերջին շրջանում ստորագրված գործնական ծրագրերի մեջ ներառված լրացումները հիմնականում վերաբերում էին այս ոլորտին: Սիրիայի գրողների միությունը ուներ երեք հայ անդամ, որոնցից էին Նորա Արմիսյանը, Ալեքսանդր Քեշիշյանը և Յազ Քալսահակյանը: Ինչ խոսք, նրանք ևս իրենց գործունեությամբ նպաստում էին ինչպես հայ-սիրիական հարաբերությունների գարգացմանը, այնպես էլ մայր հայրենիքի հետ կապերի ամրապնդմանը:

<sup>1</sup> ՀՀ ԱԳՆ, ՊԴԱ, գ.100, էջ 15:

<sup>2</sup> <http://aysor.am/am/news/2009/09/08/met/>.

Չնորանանք, որ ՀՅ առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը ևս ծնունդով Սիրիայից էր, ով իր գործունեությամբ հայ-սիրիական երկկողմ բարեկամական հարաբերությունների հաստատման ու զարգացման գործում նշանակալի պահող ուներ: Մեծ էր նաև սիրիահայերի պահող Երևանում հայ և արաբ ժողովուրդների բարեկամությունը խորհրդանշող հուշարձանի ստեղծման մեջ: Հաշվի առնելով հայոց ջարդերի ժամանակ արաբ ժողովորդի փրկարար դերը հայերի կյանքում՝ 1997 թ. մի խումբ սիրիահայ մտավորականներ և Դամասկոսի Հայ առաքելական եկեղեցու առաջնորդարանի ազգային իշխանության ներկայացուցիչներ նախաձեռնեցին այդ գործը՝ ի նշան փոխադարձ հարգանքի Երևու ժողովուրդների միջև: Հուշարձանը տեղադրվեց Խակովի պողոտայի հարևանությամբ՝ Երևանյան լճի ափին: Այն պատրաստ էր արդեն 2009 թ., սակայն պաշտոնական բացումը տեղի ունեցավ 2012 թ. աշնանը:

Հայ համայնքի հետ մեծ հույսեր էին կապում նաև Հայաստանի և Սիրիայի կառավարական շրջանակները, որոնք ամեն առիթով շեշտում և կարևորում էին համատեղ ծրագրերի իրականացման հարցում իրենց ակտիվ մասնակցությունը: Մասնավորապես Սիրիայի նախագահ Բաշար ալ-Ասադը անգնահատելի էր համարում սիրիահայ համայնքի դերը գոյություն ունեցող հայ-սիրիական եղբայրական հարաբերությունների հացում<sup>1</sup>:

Այսպիսով, կարելի է արձանագրել, որ տևական ժամանակահատվածում զանազան պատճառներով Սիրիայում ապաստան գտած հայերը ոչ միայն կարողացել էին պահպանել իրենց ազգային դիմագիծը, այլև ստեղծել բավականին հզոր և կենսունակ համայնք, որի գործունեությունը դրվել էր ինստիտուցիոնալ հիմքի վրա: Վաստակելով իրենց արժանի տեղը սիրիական հասարակությունում՝ նրանք նպաստում էին ՍՍՀ և մայր հայրենիքի միջև ձևավորված բարեկամական հարաբերությունների պահպանմանն ու զարգացմանը՝ հնարավորինս մասնակից լինելով այդ գործընթացներին:

**Արա Հովհաննիսյան, Սիրիայի հայկական գաղթօջախը և նրա դերը հայ-սիրիական հարաբերություններում 1991-2011 թթ. - Պատմության ընթացքում տարբեր պատճառներով Սիրիա էին արտագաղթել մեծ թվով հայեր: Հաստատվելով այդ Երկրում՝ նրանց հաջողվել էր ստեղծել բավականին հզոր և կենսունակ համայնք, որի գործունեությունը դրվել էր ինստիտուցիոնալ հիմքի վրա: Ունենալով իրենց արժանի տեղը սիրիական հասարակությունում՝ սիրիահայերը նպաստեցին Սիրիայի և մայր հայրենիքի միջև ձևավորված բարեկամական հարաբերությունների կայացմանը 1991-2011 թթ.:**

**Ара Оганесян, Армянская община Сирии и ее роль в армяно-сирийских отношениях в 1991-2011 гг. –**

<sup>1</sup> <http://haynews.am> 23.01.2012.

1991-2011 .

**Ara Hovhannisyan, Armenian community of Syria and its role in the Armenian-Syrian relations in the period of 1991-2011** – Throughout history, for various reasons, many Armenians emigrated to Syria. Settling in this country they managed to create quite a strong and organized community. With its worthy place in the Syrian society the Armenians contributed the establishment of friendly relations between the Republic of Armenia and the Arab Republic of Syria in the period of 1991-2011.

*Արա Հովհաննիսյան - ԵՊՀ պատմության ֆակուլտետի հայոց պատմության ամբիոնի հայցորդ*

